ՄՈՒԿԻԿԻ ՄԱՀԸ

Ծիտիկն ու Մուկիկն ախպերացան։ Գետի
ափին բուն շինեցին, մտան մեջը։
Մի օր Ծիտը գնաց քուջուջ անելու, ետ
եկավ, տեսավ Մուկիկը մեռել է։ Ծնկանը զարկեց.
— Վա՛յ, ախպեր ջան, վա՛յ...
Օխտը ճամփի մեջտեղ նստեց, հողը
փորեց, տվավ գլխին.
— Վա՛յ, ախպեր ջան, վա՛յ...
Ձենի վրա Լորիկն եկավ.
— Ծիտիկ-միտիկ, չալփետուրիկ,
Հողն ինչո՞ւ ես տալի գլխիդ։
— Թաո՛ւ, թաո՛ւ,— ասավ Ծիտը,—
Ես որ չտամ, ո՞վ տա հապա.
Մուկիկի պես ախպեր մեռավ,
Աշխարհքն էսպես մնաց անտեր,
Ես որ հողը տամ իմ գլխին,
Մեծ բան է...
— Ափսո՛ս, ափսո՛ս,— ասավ Լորը,—
Մուկիկի պես մարդը մեռավ,—
Ասավ, իրեն էնքան զարկեց,
Թևը կոտրեց, կախ արավ։

Ծառը ասավ.
— Լորիկ քուրիկ, ճըտճըտուրիկ,
Ինչո՞ւ ես մի թևըդ կոտրել։
— Բա ի՞նչ անեմ, որ չըկոտրեմ։
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մընաց անտեր.
Ծիտը գլխին հող է տալի,
Ես որ իմ մի թևը կոտրեմ՝

Մեծ բան է...
— Ա՛խ-վա՛խ, ա՛խ-վա՛խ,— կանչեց ծառը,—
Մուկիկի պես մարդը մեռնի...
Գընաց եկավ, գընաց եկավ,
Իր ճյուղերը զարկեց իրար,
Ջարդեց, մընաց ճըղնակոտոր։

Քարերն ասին.
— Ծառիկ-մառիկ, կանաչ թառիկ,
Ճյուղերդ ինչո՞ւ վեր թափեցիր։
— Վա՛հ, ձեր տունը Աստված շինի,
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մնաց անտեր.
Ծիտիկն էնտեղ հողը գըլխին,
Լորը իրեն թևը կոտրած,
Իմ ճյուղերը ես որ թափեմ՝
Մեծ բան է...

— Հազար ափսո՛ս — քարերն ասին.
Մուկիկի պես մարդը մեռավ,
Ու գոռալեն, գըռգըռալեն
Գըլորվեցին սարերն ի վար,
Թափվեցին ցած — ջըրերի մեջ։

Ջըրերն ասին.
— Ի՞նչ պատահեց, ա՛յ գիժ քարեր,
Չէ՞ դուք ձեր տեղն անժաժ էիք,
Ի՞նչ եք էդպես ցած գըլորվում։
— Էլ ի՞նչ անժաժ. բա չե՞ք ասիլ,
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մընաց անտեր.
Ծիտիկն էնտեղ հողը գըլխին,

Լորիկն իրեն թևը կոտրած,
Ծառը մընաց ճըղնակոտոր,
Մենք մեր տեղից որ գըլորվենք՝
Մեծ բան է...

— Վա՜յ-վի՜յ, վա՜յ-վի՜յ, ի՜նչ իմացանք,
Մուկիկի պես մարդն էլ մեռնի՞...
Ջըրերն ասին. խառնըվեցին,
Ու գընացին պըղտոր-մըղտոր։
Էն կողմերից տըմտըմբալով
Պառավն եկավ։ Էս որ տեսավ.
— Ա՜յ գըլգըլան ջըրեր,— ասավ,—
Դուք պարզ էիք միշտ ու մարմանդ,
Ինչո՞ւ էսօր պըղտորվեցիք։

— Վա՜յ քու տունը քանդվի, պառա՜վ,
Բա չե՞ս լըսել՝ ինչ է եղել.
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մընաց անտեր,
Ծիտը էնտեղ հողը գըլխին,
Լորը իրեն թևը կոտրած,
Ծառը էլած ճըղնակոտոր,
Քարերը ցած գըլտոր-մըլտոր,
Մենք պղտորվենք՝ մեծ բան է...

— Հողն իմ գլխին,— պառավն ասավ,—
Մուկիկի պես մարդը մեռնի՞...
Ջարկեց իրեն ու ծըվատեց,
Երեսն արավ արյունըվիկ,
Մազաքըձուձ՝ գյուղը վազեց։
Գյուղում ասին.
— Պառավ տատիկ, ինչ պատահեց.

Ինչո՞ւ երեսդ արյունլըվիկ։
— Վա՛յ, քոռանամ, մի՛ խոսեցնեք։
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մընաց անտեր.
Ծիտը էնտեղ հողը գըլխին,
Լորը իրեն թևը կոտրած,
Ծառը եղած ճըղնակոտոր,
Քարերը ցած գըլտոր-մըլտոր,
Ես իմ երեսն արյունոտեմ՝
Մեծ բան է...

— Ափսո՛ս, ափսո՛ս, հազար ափսոս,
Որ էն տեսակ մարդը մեռավ...
Ափսոսացին էն գյուղացիք,
Սև կապեցին, սուգ նստեցին.
— Վա՛յ, ո՞վ ասավ, ո՞վ ասավ...
— Հողագըլուխ Ծիտիկն ասավ,
Թևը կոտրած Լորիկն ասավ,
Ճըղնակոտոր Ծառիկն ասավ,
Գըլտոր-մըլտոր Քարիկն ասավ,
Պըղտոր-մըղտոր Ջըրիկն ասավ,
Մազաքըճուճ Պառվիկն ասավ,
Մեր Մուկիկը մեռե՛լ է...
Էլ ո՞վ մընաց էս աշխարհքում,
Էլ ի՞նչ ապրենք էս աշխարհքում...
Էսպես ասին
Ու միասին
Լացով, կոծով,
Ճիչ-գոռոցով
Հավաքվեցին ու գընացին,
Քարիցն ընկան, կոտորվեցին։